ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2011 թվականին մարզին հատկացված առաջին վերարտադրության և էլիտար սերմացուի ցանքատարածությունների վիճակն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Ասատրյան Ի. – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, նախագահ

   Հովհաննիսյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

   Ջրաղացպանյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

   Խալաֆյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

   Բաղդասարյան Կ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրասպորտի և ճանապարհաշինության բաժնի մասնագետ

   Կարապետյան Ս. – մարզպետի տեղակալի օգնական

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրություններ կատարել ըստ մարզի տարածաշրջանների և արդյունքները 15-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետին:
3. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Հ.Շահբազյանին և ,,Գեղամա աշխարհ,, մարզային թերթի խմբագիր Խ.Խլղաթյանին՝ լայնորեն լուսաբանել հանձնաժողովի աշխատանքները:
4. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ.Ստեփանյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ